

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ԴԱՏԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒՔՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

30.01.2018 15:22

Հարգելի գործընկերներ,

2018 թվականի **հունվարի 31-ին ժամը 18:30-ին**, ՀՀ փաստաբանների պալատի շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, չորրորդ հարկ, մեծ դահլիճ) տեղի կունենա ակումբի նիստ, որտեղ քննարկվելու է ՀՀ դատական օրենսգրքի նախագծով սահմանված՝ դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանքի կիրառումն նախատեսող իրավակարգավորման դեմ **փաստաբանների հետագա գործողությունների պլանը**:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովը երկրորդ ընթերցումից առաջ նախնական քննարկման և եզրակացություն ներկայացնելու նպատակով **2018թ. հունվարի 31-ի օրակարգի** մեջ ընդգրկել է նաև ՀՀ դատական օրենսգրքի նախագիծը:

Ենթադրվում է, որ ՀՀ Ազգային ժողովում նշված նախագիծը կքննարկվի **2018թ. փետրվարի 6-9** ընկած ժամանակահատվածում:

**Հիշեցնենք**, որ դատական տուգանքի դեմ պայքարի հետ կապված տեղի են ունեցել մասնավորապես հետևյալ հրապարակային իրադարձությունները՝

- **2017թ. հոկտեմբերի 31-ին** ՀՀ փաստաբանների պալատի նախագահը՝ ներկայացնելով փաստաբանների պալատի **դիրքորոշումը**, դատական սանկցիա տուգանքի կիրառումն անթույլատրելի է համարել:

- **2017թ. նոյեմբերի 8-ին** ՀՀ փաստաբանների պալատում քննարկում է կազմակերպվել: Քննարկման մասնակիցները **մտահոգություն են հայտնել**՝ նշելով, որ տուգանքը կարող է կաշկանդել փաստաբանին պաշտպանության իրականացման գործում և հայտնել են իրենց վճռականությունը և միասնականությունը ծայրահեղ միջոցների գնալու հարցում, եթե պետական մարմինները առողջ և կառուցողական քննարկումից և լուծումներից խուսափեն:

- **2017թ. նոյեմբերի 21-ին** ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ արդարադատության նախարարությանն է ուղարկել **դատական սանկցիայի վերաբերյալ առաջարկությունը** և նույն օրը հրապարակել է փաստաբանների պալատի կայքում:

- **2017թ. դեկտեմբերի 22-ին** ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը «Ազատության» ստուդիայում **քննադատել է** ԱԺ-ում քվեարկվող Դատական օրենսգրքի նախագիծը:

- **2017թ. դեկտեմբերի 22-ին** ՀՀ փաստաբանների պալատի նախագահը մամուլի ասուլիս է հրավիրել և անդրադարձել է դատական տուգանքի խնդրին: Ասուլիսը լուսաբանել են մի շարք լրատվամիջոցներ, այդ թվում՝ **Հայաստանի Հանրային ռադիոն, Արմենպրես գործակալությունը, pastinfo.am կայքը**:

- **2018թ. հունվարի 16-ին** ՀՀ փաստաբանների պալատի նախագահը **դիմել է** ՀՀ Ազգային ժողովի նախագահին և ՀՀ արդարադատության նախարարին առաջարկելով՝ ՀՀ դատական օրենսգրքի սահմանադրական օրենքի նախագծից փաստաբանների և դատախազների նկատմամբ տուգանք կիրառելու մասին կանոնը հանել, այդ հարցի լուծման հնարավորությունը վերապահելով դատավարական օրենսգրքերին:

- **2018թ. հունվարի 16-ին** ՀՀ փաստաբանների պալատը նույն հարցով **դիմել է** նաև Եվրոպայի փաստաբանների պալատների և միությունների խորհրդին (CCBE)՝ վերջինիս դիրքորոշումը ստանալու նպատակով:

- **2018թ. հունվարի 16-ին**, ՀՀ փաստաբանների պալատում քննարկում է կազմակերպվել: Քննարկման մասնակիցները **հայտարարությամբ են** հանդես եկել՝ պահանջելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից և կառավարությունից նախագծում ներառված՝ փաստաբանի նկատմամբ դատարանի կողմից տուգանքի տեսքով դատական սանկցիա կիրառելու հնարավորությունը բացառել:

- **2018թ. հունվարի 17-ին** փաստաբանների հայտարարությանը միացել է **608 փաստաբան**, իսկ հինգ օրվա ընթացքում՝ **1354 փաստաբան**:

- **2018թ. հունվարի 22-ին Լոռու մարզի փաստաբանները**, որպես նախագգուշական քայլ, մեկօրյա բողոքի ակցիա են իրականացրել՝ այդ օրը հրաժարվելով Լոռու մարզում պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

- **2018թ. հունվարի 24-ին Շիրակի մարզի փաստաբանները** նույնպես մեկօրյա նախագգուշական բողոքի ակցիա են իրականացրել՝ այդ օրը հրաժարվելով մարզում պետական մարմիններում պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

- **2018թ. հունվարի 25-ին** ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամները **հանդիպել են** Ազգային ժողովի ներկայացուցչի հետ: ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրայր Թովմայանը՝ կարևորելով փաստաբանության դերը արդարադատության

իրականացման հարցում, հավաստիացրել է, որ փաստաբանների պալատի ներկայացուցիչների դիրքորոշումը կներկայացնի հանձնաժողովի մյուս անդամներին և քննարկման առարկա կդարձնի.


- **2018թ. հունվարի 26-ին Տավուշի և Արարատի մարզերի** փաստաբանները մեկօրյա նախագգուշական բողոքի ակցիա են իրականացրել՝ այդ օրը հրաժարվելով իրենց մարզերում պետական մարմիններում պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց.

- **2018թ. հունվարի 30-ին Սյունիքի մարզի փաստաբանները** հայտարարել են նախագգուշական բողոքի ակցիա.

- փաստաբանները, այդ թվում՝ խորհրդի անդամները, իրավապաշտպանները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները, տարբեր մասնագիտական և լրատվական ամբիոններից քննադատել են նշված նախագիծը:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
մամուլի խոսնակ՝ Ծովինար Խաչատրյան


### Առաջարկվող նորություններ




**17.01.2018** ԲԱԶՄԱԹԻՎ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՊԱՀԱՆՋ  
ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՎ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ



**18.01.2018** ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ  
ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀՂԵԼ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀԻՆ



**18.01.2018**  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ  
ՄԻԱՑԵԼ Է 907 ՓԱՍՏԱԲԱՆ



**19.01.2018**  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ  
ՄԻԱՑԵԼ Է 1110 ՓԱՍՏԱԲԱՆ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })